ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Տավուշի մարզ, Թեղուտի միջնակարգ դպրոց,

հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Բանալի բառեր՝ *կրթական համակարգ, կրթության բովանդակություն, գիտահանրամատչելի և գիտամեթոդական գրականություն, գիտական առաջընթաց, ուսուցում, արդիականացում:*

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում,որի զարգացման թափն ու արագությունը սերտորեն կապված են կրթական համակարգի հետ և պահանջում են կրթական համակարգի համապատասխանություն 21-րդ դարի պահանջներին: Վերջին տարիներին կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները այն տանում են դեպի արդիականացում: Իհարկե, կրթության արդիականացումը ենթադրում է որոշակի խնդիրների վերհանում, դրանց լուծման ուղիների մշակում, կրթության բովանդակության մշակում, որն այսօր որդեգրել է մեր կրթական քաղաքականությունը: Այժմ արդիականացվող կրթական համակարգում մեծ է սովորող-դասավանդվող նյութ-ուսուցման մեթոդ-դասավանդող հարաբերությունների դերը: Շատ կարևոր է այն գիտակցումը, որ աշխարհի շարունակական փոփոխության հոլովույթում արդի աշխարհը հետևանքն է մեր երեկվա գործելակերպի, իսկ ապագան պայմանավորված է մեր այսօրվա գործելակերպով: Ըստ այդմ՝ արդի կրթական համակարգը պետք է ուղղված լինի ապագայի ձևավորմանը, որին էլ նպաստում է սովորող-գիտելիք-դասավանդող ճիշտ հարաբերությունների զարգացումը: Անհրաժեշտ է ձևավորել արդար, լայնախոհ, ազատամիտ, իր իրավունքները և պարտականությունները ճանաչող քաղաքացի, ձևավորել ժողովրդավարական հասարակություն: Այս առումով՝ կրթության կազմակերպումը ամուր հիմքերի վրա դնելու համար կարևորվում է գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականության դերը:

Գիտամեթոդական գրականությունը կարող է ծառայել իբրև ուսումնական, ինչպես նաև ուսումնաօժանդակ միջոց տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա դարաշրջանում գիտության տարբեր ոլորտներում նորարարական մտքին և համաշխարհային գիտական առաջընթացին ծանոթանալու, կիրառելու, զարգանալու, հետազոտելու և այլ հարցերում: Այն հնարավորություն է տալիս արդիականացվող կրթական համակարգում սովորողներին և դասավանդողներին կրթության բովանդակության այս կամ այն նյութի մատուցման մեթոդներին ծանոթանալու և ծանոթացնելու, ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման, ինչպես նաև այլ երկրների փորձը տարածելու:

Հարկ է նշել, որ գիտահանրամատչելի գրականությունը նպաստում է հանրության տարբեր շերտերի գիտական մակարդակի զարգացմանը, և կրթական արդի համակարգում գիտահանրամատչելի գրականության դերի բարձրացման անհրա-

ժեշտություն է զգացվում: Գիտության նորարարական մտքի տարածումը հանրության լայն շրջաններում հնարավորություն է տալիս ազդեցություն թողնելու անհատի՝ որպես հասարակության անդամի, կրթական մակարդակի բարձրացման, արժեքային համակարգի ձևավորման, աշխարհայացքի ընդլայնման, հասարակության հոգևոր կյանքի զարգացման, ազգային և համամարդկային արժեքների ամրապնդման վրա: Այս առումով՝ կարևորվում է նյութի և լեզվի փոխկապակցվածությունը, բովանդակության և ժամանակաշրջանի ներդաշնակությունը, համամարդկային, կրոնական, գիտական, հրապարակախոսական և այլ գաղափարախոսությունների հիմնադրույթների մատչելիությունը և ընկալելի լինելը, ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքների վերաբերյալ անհատի պատկերացումների ձևավորումը: Իսկ որպես հիմնարար արժեք հանդես են գալիս ազգը՝ որպես հավաքական ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք, լեզուն՝ որպես հայ ինքնության երաշխավոր, հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթը, պետականությունը, հասարակական համերաշխության սկզբունքները, բարոյականությունը, ազատության և արդարության վերաբերյալ մեր պատկերացումները[1]:

Գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականությունը կարող է ծառայել տեսական- ճանաչողական, կիրառական, աշխարհայացքային, ուսուցողական, հետազոտական, դասավանդման գործառույթների ընդլայնմանը, ինչպես նաև փոխըմբռնման, միջմշակութային հարաբերությունների խթանման և ընդլայնման, բազմակարծության, մարդու իրավունքների և օրենքների գերակայության գիտակցման զարգացմանը, իրերը, երևույթները, կյանքը, աշխարհը քննելու, ուսումնասիրելու, բացահայտելու, նորարարական մտքին և գիտության առաջընթացին ծանոթանալուն, կիրառելուն, կառուցողական մոտեցմանը, որն այսօր կրթական համակարգի նպատակներից է:

Մեր օրերում առաջնային են սովորողի արձագանքը առօրյա իրավիճակներին և մարդկային հարաբերությունների դրսևորումը, ինչին մեծապես ուշադրություն է դարձվում սովորողի ուսումնառության ողջ ընթացքում՝ սկսած դպրոցից մինչև բուհ և հետբուհական կրթություն: Գիտամեթոդական գրականությունը դասավանդողին տալիս է հնարավորություն՝ ծանոթանալու առաջավոր փորձին, կրթության բովանդակության յուրացման հարցում նպատակին հասնելու մեթոդներին՝ կրթության բովանդակությունը սովորողի կրթական մակարդակի բարձրացմանը ծառայեցնելու և վերջնարդյունքին հասնելու համար: Նշված արդյունքին հասնելու համար առաջնային է լեզվի դերը, որովհետև ՀՀ-ում գիտահանրամատչելիացման հիմնական լեզուն հայերենն է, իսկ դա նշանակում է, որ կրթության զարգացմանն ուղղված գիտակրթական և գիտահանրամատչելի գրականությունը պետք է կիրառելի դարձնել հայերեն: Առաջնային պետք է համարել նաև հայոց լեզվի նպատակային ուսուցումը դպրոցներում, որը կնպաստի հայոց լեզվի դերի բարձրացմանը: Չմոռանանք,որ լեզուն ազգային դաստիարակության հզոր

[1] «Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր,2017,էջ 5:

գործոններից մեկն է:«Լեզուն անմիջաբար կապված է մտածողության հետ, արտահայտում է նրա էությունն ու առանձնահատկությունները»[2]: Ինչ վերաբերում է հանրակրթությանը, նշենք, որ ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ են կազմում դասագրքերը, որոնց ստեղծման հանդեպ ցուցաբերվում է նորարարական մոտեցում, այն է՝ արդիականացում՝ համապատասխանեցնելով ժամանակակից կրթական պահանջներին: Այս առումով կարևորվում են.

1. Լեզուն՝ որպես դասանյութը սովորողին ընկալելի դարձնելու հիմնական միջոց: Դասագրքերում ուսումնական նյութը պետք է ներկայացնել մատչելի,հասկանալի լեզվով՝ զերծ երկիմաստություններից, անհարկի խճողումներից ու խրթնաբանություններից:

2. Բովանդակությունը: Բովանդակային նյութը պետք է համապատասխանի թեմային, սովորողի տարիքային առանձնահատկություններին,նպաստի սովորողի կրթական մակարդակի բարձրացմանը, աշխարհայացքի ձևավորմանը, անհատականության կերտմանը, հետաքրքրությունների բացահայտմանը, նաև՝ սովորողի ինքնաբացահայտմանը:

3. ՏՀՏ կիրառման հնարավորությունը: Այսօր 21-րդ դարի սովորողի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում ՏՀՏ համակարգերը, սմարթֆոնները և այլ տեխնոլոգիաներ, որոնց կիրառումը պետք է ծառայեցնել կրթության բովանդակային նյութի ընկալմանը: Ուստի դասագիրքը ևս պետք է համապատասխան միջոցներ կիրառելու հնարավորություն ընձեռի: Մերօրյա դասագրքերը ներառում են ծածկագրեր, ՏՏ կիրառում պահանջող տարատեսակ առաջադրանքներ:

4. Նկարներ, նկարազարդումներ, աղյուսակներ, գծագրեր, քարտեզներ: Սրանք ավելի ամբողջական են դարձնում ներկայացված բովանդակային նյութը, ընդլայնում սովորողի հետաքրքրությունների շրջանակը, ունեն ճանաչողական նշանակություն, ինչպես նաև զարգացնում են սովորողի մտածական ունակությունները, ձևավորում են գեղագիտական ճաշակ:

5. Լրացուցիչ նյութեր, որոնք կարող են լինել բազմաբովանդակ տեղեկություններ ուսումնական նյութի վերաբերյալ և հետաքրքրություն առաջացնել այն ավելի խորությամբ ուսումնասիրելու և ինքնուրույն հետազոտություններ կատարելու:

«Դասագիրքը պետք է լինի մի լավ ուղեցույց՝ դեպի գրականություն և կյանք, տա նյութի ողնաշարը, էականը . . . »[3]: Հավելենք, որ վերոնշյալ բաղադրիչների ապահովումը կարևոր է ոչ միայն դասագրքերի, այլև գիտահանրամատչելի և մեթոդական գրականության համար: Ընդունելի փաստ է, որ գիտահանրամատչելի և գիտամեթոդական գրականություն ստեղծելը բարդ գործընթաց է, որովհետև ժամանակի հարափոփոխ ընթացքում փոխվում են սովորողների հետաքրքրութ-

[2] Է.Ջրբաշյան, Գրականության տեսություն,Երևան,1980,էջ 221:

[3] Հ.Թամրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, 1998, էջ 364:

յունները և կրթական պահանջները, ռեսուրսները, զարգանում է գիտությունը, իսկ դա ենթադրում է կրթության բովանդակության փոփոխություն:

Ամփոփագիր

Այսպիսով՝ նկատի ունենալով գիտակրթական և գիտահանրամատչելի գրականության (գրքեր, դասագրքեր, ուղեցույցներ, հանդեսներ, ուսումնական, ուսումնաօժանդակ ձեռնարկներ և այլն) կարևորությունը արդիականացվող կրթական համակարգում՝ որպես կրթական առաջընթաց ապահովող անհրաժեշտ միջոց՝ կարծում ենք, որ հարկ է ընդլայնել դրանց տարածումը և ապահովել հասանելիությունը կրթական լայն զանգվածներին՝ այս եղանակով ևս փորձելով զարկ տալ ՀՀ-ում կրթական առաջընթացին, կրթության և գիտության զարգացմանը, ինչը կնպաստի ժամանակի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացու և ժողովրդավարական հասարակության ձևավորմանը՝ որպես ապագա Հայաստանի հիմնասյուներերից մեկը:

THE ROLE OF SCIENTIFIC-METHODOLOGICAL AND POPULAR SCIENCE IN THE MODERNIZING EDUCATIONAL SYSTEM

Keywords: *educational system, educational content, popular science and scientific-methodological literature, scientific progress, teaching, modernization.*

Thus, considering the importance of scientific, educational and popular science literature (books, textbooks, guides, journals, educational and teaching aids, etc.) in the modernizing educational system as a necessary means of ensuring educational progress, we believe that it is necessary to expand their distribution and ensure access to the broad masses of educated people, in this way also trying to give impetus to educational progress, the development of education and science in the Republic of Armenia, which will contribute to the formation of a citizen and a democratic society ready to face the challenges of the time as one of the pillars of the future Armenia.

РОЛЬ НАУЧНО-МЕТОДИЧЕСКОЙ И НАУЧНО-ПОПУЛЯРНОЙ НАУКИ В МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ

Ключевые слова: *система образования, содержание образования, научно-популярная и научно-методическая литература, научный прогресс, преподавание, модернизация.*

Таким образом, учитывая значение научной, учебной и научно-популярной литературы (книг, учебников, руководств, журналов, учебных и методических пособий и т.д.) в модернизирующейся образовательной системе как необходимого средства обеспечения образовательного прогресса, мы считаем, что необходимо расширить их распространение и обеспечить доступ к ним широких масс образованных людей, тем самым также стремясь дать импульс образовательному прогрессу, развитию образования и науки в Республике Армения, что будет способствовать формированию гражданина и демократического общества, готового противостоять вызовам времени, как одного из столпов будущей Армении.

Օգտագործված գրականություն

1. Է.Ջրբաշյան, Գրականության տեսություն,Երևան, 1980:
2.Է.Ջրբաշյան, Հ.Մախչանյան,Գրականագիտական բառարան, 1980:
3.Հ.Թամրազյան, Գրական դիմանկարներ,հոդվածներ,Երևան, 1998:
4.«Ընտանիք և դպրոց» գիտամեթոդական ամսագիր, 2017: